ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/63

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9301-18 գրությամբ «Մորել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 21.05.2018թ. թիվ 197 գրության հիման վրա, 24.05.2018թ. թիվ 03/26-3/9301-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մորել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մորել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մորել» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.05.2018թ. «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովին ներկայացված տեղեկատվության «Մորել» ՍՊԸ-ն առ 27.04.2018թ. դրությամբ ունեցել է 809 750 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն, որի պատճառով Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ նախ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգիրքն ուժի մեջ մտնելով և ՀՀ-ում առաջին անգամ ներդվող հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, հարկային մարմնի տեղեկատվական բազայում այդ ժամանակաշրջանում տիրող խառնաշփոթը, կապված անցումային դրույթների հետ, գնահատող հանձնաժողովին չի տրամադրվել տվյալ պահին նույն միասնական հաշվին Ընկերության մի քանի անգամ ավելի՝ 20 828 556 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդը: Ըստ Ընկերության կողմից հարկային մարմինների հետ ունեցած ճշտումների, այդ դեբետային մնացորդը պետք է ուղղվեր առկա պարտավորությունների մարման, պահպանելով մեկ միասնական հաշվի լոգիկան: Նշված իրավիճակում ավելի քան պարզ է դառնում, որ Ընկերությունը ցանկություն չի ունեցել հանդես գալու որպես ոչ պարտաճանաչ հայտատու, կամ չի ունեցել բավարար ֆինանսական կարողություններ գնմանը մասնակցելու համար, առավել ևս, որ Ընկերության կողմից հայտը ներկայացնելու հետ միասին չի ներկայացվել որևէ տեղեկանք կամ կեղծ տեղեկատվություն հարկային պարտավորությունների մասին, վստահ լինելով, որ Ընկերության ունեցած դեբետային մնացորդն ավելի քան բավարար է ընթացիկ հարկային պարտավորության մարման համար:

Վերոհիշյալ գրությամբ «Մորել» ՍՊԸ-ն խնդրել է Ընկերությանը չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, հաշվի առնելով ոչ Ընկերության մեղքով ստեղծված իրավիճակը և գրությանը կից ներկայացված

տեղեկանքում առկա հավաստիացումն այն մասին, թե հայտը ներկայացնելու պահին քանի անգամ ավելի է գերազանցում Ընկերության դեբետային մնացորդը հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների միասնական հաշվին, քան հանձնաժողովին ներկայացված պարտավորությունը:

«Մորել» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/63 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 10:20-ին և 06.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 06.06.2018թ. ժամը 10:15-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.05.2018թ. թիվ 197 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և լվացքի միջոցներ ձեռքբերելու նպատակով գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգին 27.04.2018թ. էլեկտրոնային եղանակով հայտ է ներկայացրել նաև «Մորել» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. թիվ 4 որոշմամբ Ընկերությունը 2-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով 07.05.2018թ. էլեկտրոնային եղանակով հարցում է ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ: 14.05.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից էլեկտրոնային եղանակով ստացվել է պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի «Մորել» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 809 750 ՀՀ

դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետով, 15.05.2018թ. թիվ 6 որոշմամբ Ընկերության հայտը մերժել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում «Մորել» ՍՊԸ-ն կամ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը գնահատող հանձնաժողովին լրացուցիչ տեղեկատվություն չի ներկայացրել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/63 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 10:20-ին և 06.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/63 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/63 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 27.04.2018թ. հայտ է ներկայացրել «Մորել» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 18:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մորել» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մորել» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 809 750 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Մորել» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9301-18 գրությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 21.05.2018թ. թիվ 197 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 27.04.2018թ. հայտ է ներկայացրել «Մորել» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 18:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մորել» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 07.05.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Մորել» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մորել» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 809 750 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Մորել» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Մորել» ՍՊԸ-ի ինչպես նաև մի շարք այլ մասնակիցների վերաբերյալ 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/9969-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե մասնակիցների մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է վերջիններիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջիններիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-

րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Մորել» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 809 750 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Մորել» ՍՊԸ-ն «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով,

առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն ածանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Մորել» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9301-18 գրությամբ «Մորել» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00903559) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**